զարմացքի արտայայտութեամբ։ Երկուսն էլ հասարակ, բոլորակ լուսոյ պսակներով։ Աջ կողմից մի փոքր ֆիգուր նիզակով ծակել է Յիսուսի կողը, որտեղից արեան շիթեր են կաթում. իսկ ձախից մի ուրիշ՝ դարձեալ փոքր ֆիգուր՝ սպունգն է մօտեցընում Յիսուսին. այս երկու ֆիգուրները աղօտ նկարուած. բարձունքի վերայ դրուած է մի գոյլ, որ բռնել է ձախ ձեռքով։ է դրուած խաչափայտին յենած, որի վերայ բարձրացել է մի ֆիգուր և գրկել իրանը իջեցնելու համար. նա հագել է մինչև ծնկները հասնող բաճկոն (տունիկայ), ոտքերին երկարավիզ կօշիկներ, մազերը սև, միրուքը սրածայր։ Յիսուսի ձախ կողմից մի ուրիշ ֆիգուր նման զգեստով, աքցանը ձգել է և կամենում է Յիսուսի ոտքն ազատել բեռից. սրանք աւելի փոքր են Մա-



Պատկեր 30

Ձեռ. Էջմ. N 362/3784. մանրանկար 1057 թ.

Խաչափայտի բոլոր պարագաները՝ պատուանդանով, Գողգոթայի բլրով, ցցերով և Ադամի գլխով, արեգակով և լուսնով կրկնուած են և խաչից իջեցնելու տեսարանի մէջ. Մարիամ և Յովհաննէս լրենց տեղերում և Նոյնպիսի հագուստով։ Նոյնն է և Յիսուսի դիրքը. միայն այստեղ պոկուած է աջ ձեռքը, որ Մարիամ բռնել է վերնազգեստի փէշերով. իսկ Յովհաննէս աջով բռնել է խաչեցեալի ձեռքը, որ պոկուած է խաչափայտից և կախ ընկած. ձախը դրել է կրծքին որպէս երկիւղածութեան նշան։ Յիսուսի աջ կողմից սանդուղ

րիամի և Յովհաննէսի համեմատութեամբ և նիմբուս չունին, ինչպէս և Հաւուց Թառի պատկերի մէջ տեսանք։ Խաչի հորիզոնական թեւերից վեր երկու տեսարանների մէջ ևս նկատւում են բոլորաձև արեգակն ու լուսինը կիսախաւար վիճակի մէջ։ Խաչելութեան և խաչից իջեցնելու մանրանկարները դրուած են իրար կողքի և մի ընդհանուր շրջանակ ունին, որ առիթ կարող է լինել մտածելու, թէ ամբողջութեան սկզբնական օրինակը մի պատկեր է եղած։

Մի ուրիշ մանրանկար նոյն գոյգ տեսարաններով ունինք Էջմիածնի N 362/3784